Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի
«Հացիկի մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի
2026թվականի հուլիսի «27»-ի N 25-L հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ՀԱՑԻԿԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Հացիկի մսուր- մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1.Մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ) -0.25 դրույք /33.000 ՀՀ դրամ աշխատավարձ)<br>2. Դաստիարակ- 1,17 դրույք /154440 ՀՀ դրամ/<br>3. Հոգեբան-0. 5 դրույք /66000 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>4. Երաժշտության ղեկավար-0,5 դրույք/66000 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>5. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ-0,25 | 1) **Որակավորման պահանջները**<br>1. Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը ուսումնական գծով տնօրենի տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>2. Հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>3. Հաստատության հոգեբանի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն:<br>4. Հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա՝ 1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց). 2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան: | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դրուք /33.000 ՀՀ դրամ աշխատավարձ/ | 5. Հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ 1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ. 2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Ֆիզկուլտուրա» առարկան:<br><br>2) **Ընդհանրական պահանջները**<br><br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի, դաստիարակի, հոգեբանի երաժշտության ղեկավարի և ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | կատարելու համար: | 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը**՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Հացիկ 2փ. թիվ 1 /մանկապարտեզ/<br>**Օրը**՝ 2026 թվականի **սեպտեմբերի 02-ին** | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Հացիկ 2փ. թիվ 1 /մանկապարտեզ/<br>**Հեռ. 093 095544**<br>**Էլ. հասցե՝ hatsik.mankapartez@gmail.com**<br>**Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ** | | **2026 թվականի հուլիսի 30-ից մինչև 2026 թվականի օգոստոսի 26-ը ներառյալ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ժամը՝ 12:00 | **հղումով՝ https://escs.am/am/news/11978։** | | |
| | | **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից։ Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում։** | | |